№ 29 Հինգշաբթի Մարտի 10 1888 Հինգշաբթի Մարտի 10 № 29

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնական և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցրված ոյժերով գործելու հակումն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տօներից յետոյ. Ծխախոտի արդիւնաբերութիւնը Արդուինի գաւառում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիֆլիսի հայ-կաթոլիկները.

ՑՐՎԱԾ ՈՅԺԵՐՈՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱԿՈՒՄՆ

—

Հայերը ամեն բանում հակում ունեն գործելու անմիաբան կերպով, ցրված ոյժերով։ Հային յատուկ է իր անձի և իր ընդունակութիւնների մասին անչափ մեծ կարծիք ունենալը։ Հայը երբէք չը գիտէ հպատակվել, խոնարհվել ուրիշին, աւելի ընդունակին, կամ փորձվածին, հայը զուրկ է ամեն տեսակ դիսցիպլինայից։ Հայը ոչ մի գործում չը գիտէ, չէ սիրում երկրորդական, փոքր ի շատէ ստորադրեալ դեր խաղալ, այլ ամեն մէկը, ինչքան էլ անպատրաստ լինի, կամենում է անմիջապէս առաջին դերը խաղալ։ Հայը երբէք չի խոստովանվի թէ ուրիշ հայ իրանից աւելի գիտէ, աւելի ընդունակ է որ և է գործ կատարել, այլ հաւատացած է, որ եթէ ինքն ուզենայ միայն,—մի օրում կաջողեցնի այն բոլորը, ինչ որ իր նախորդները տարիների տոկուն աշխատանքով հազիւ կարողացան աջողեցնել։

Երբ որ հայերի մէջ գոյութիւն ունի մի որ և է հաստատութիւն կամ ձեռնարկութիւն, լինի դա դպրոց, լրագիր, ամսագիր, թատրոն, գրադարան, ընթերցարան, ընկերութիւն և այլն,—հայը երբէք չի միանայ արդէն եղած հիմնարկութեան կամ ձեռնարկութեան հետ, այլ անպատճառ կաշխատի նորը հիմնարկել, որպէս զի ինքն գլխաւոր դերը խաղայ և ոչ թէ երկրորդական, որ անկասկած պէտք է խաղար, եթէ միանար հինի հետ....

Հայի այդ հակումը ցրված ոյժերով գործելու, ամեն մի հայ անհատի այդ ձգտումը անպատճառ ուզենալ առաջին դեր խաղալու ամեն մի գործում՝ առաջ է բերում հայերի մէջ այն անմխիթար երևոյթը, որ հայերը երբէք չեն խմբվում մի որ և է հաստատութեան չորս կողմ, այլ ամեն մի անհատ ուզում է անպատճառ ուրիշներից անկախ իր սեփական ձեռնարկութիւնը սկսել.... Այդ երևոյթը նշմարվում է և մեր գրական գործունէութեան մէջ և տխրալին այն է, որ քանի գնում է՝ աւելի և աւելի է նշմարվում և ընդհանրանում։

Մի հայ հիմնում է մի լրագիր,—անմիջապէս մի ուրիշ հայ հիմնում է մի այլ լրագիր։ Պետերբուրգում սկսում է երևալ մի հայոց ամսագիր,—անմիջապէս Մոսկվայի հայերը ձեռնամուխ են լինում մի հայոց ամսագրի հրատարակութեան Մոսկվայում, այնուհետև Թիֆլիսումն էլ մէկը սկսում է մի ամսագիր հրատարակել, կ. Պոլսումն էլ, և այլն....

Եւ ցաւալին այն է, որ այդ բոլոր ձեռնարկողներից ոչ մէկը փորձված չէ, պատրաստ չէ պուբլիցիստական գործունէութեան՝ ոչ իր բնածին ձիրքերով, ոչ էլ այն բազմակողմանի հմտութիւններով, որոնք յատկապէս անհրաժեշտ են հրապարակախօսական ասպարիզում որ և է, թէ կուզ ամենաանշան, աջողութիւն ունենալու համար։

Եւ հետևանքը ի՞նչ է լինում. այն, որ մեզանում հրապարակական ամեն ասպարիզում սկսողներ շատ կան, բայց գործը շարունակողներ շատ քիչ.... Նոր նոր գործեր շատ են սկսվում, մանաւանդ գրական ասպարիզում, բայց սկսվածներից շատ քիչերն են աջողվում։

Բայց մի և նոյն ժամանակ նայեցէք իւրաքանչիւր սկսողի անձնավստահութեանը.... Ամեն մէկը այնպէս է խօսում, այնքան բաներ է խոստանում, ակնարկելով թէ մինչև այդ րոպէն ոչ ոք ոչինչ արած չէ,—որ ակամայ մարդը կարծում է թէ այդ նոր սկսողից պէտք է վերջապէս հիմք դրվի մի նոր դարաշրջանի մայրենի գրականութեան մէջ։

Բայց չէ անցնում մի քանի ամիս, կամ մի քանի շաբաթ,—և մեծ մեծ խօսքերով, մեծ մեծ խոստումներով, աննկարագրելի անձնավստահութեամբ, անձնազոհութեամբ սկսած գործը՝ կատարելապէս անհետանում է, այլ ևս երբէք չերևալու համար.... Իսկ նրա տեղը սունկի պէս սկսում են բուսնել նոր նոր ձեռնարկութիւններ, նոյնչափ անձնավստահութեամբ և յանդգնութեամբ ազդին խոստանալով նոր կեանք, նոր մտքեր, կրթիչ ազդեցութիւն, վերջապէս մի նոր դարաշրջան,—բայց նոյնչափ մեռելածին, անկենդան լինելով, որչափ նախկինները, որոնք և շուտով ուժասպառ լինելով, կարճ ժամանակամիջոցում մեռնում են իրանց բնական մահով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՕՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

Ուրախութիւն, հրաւէրքներ, ճաշկերոյթներ, թատրոն, պարահանդէսներ, դիմակահանդէսներ, կեր ու խում,—ահա այն բոլորը ինչ որ մի առանձին եռանդով տեղի է ունենում բարեկենդանի տօներին, որին այժմ յաջորդեց մեծ-պասի միատեսակ կեանքը, միատեսակ՝ գոնէ արտաքուստ, ըստ երևոյթին։ Հասարակական զուարճութեան տեղերը քաղաքներում փակվեցան, և ամբողջ եօթն շաբաթ փակ կը մնան, մի ծանր շրջան կազմելով քաղաքային աղդաբնակութեան այն մասի համար, որը իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում այդ տեղերում։ Քաղաքային աղդաբնակութիւն ենք ասում, որովհետև գիւղական հասարակութեան համար մեծ պասը բաց է անում բոլորովին նոր և գիւղացու համար կենսական պարապմունքների շրջանը։ Գարնան հոտը արդէն փչում է, և ձմեռվայ երկար հանգստութիւնից, և նոյն իսկ պարապութիւնից յետոյ գիւղացին՝ թօթափելով իր վրա ծանրացած թմրութիւնը՝ դաշտն է դուրս գալիս։ Մեծ-պասի հետ միասին գիւղացու համար սկսվում է դաշտային պարապմունքը, որը պէտք է կլանէ նրա ամբողջ ժամանակը և ոյժը մինչև ձմեռվայ վրահասնելը։ Գիւղական հասարակութեան համար մեծ-պասը ամենակարևոր միջոցն է։ Իսկ քաղաքային կեանքի մէջ նա բոլորովին ուրիշ պատկեր է ներկայացնում։ Մենք չենք խօսում, ի հարկէ, քաղաքային աղդաբնակութեան այն մասի վերաբերմամբ, որը ամբողջ տարին անց է կացնում տանը, ընտանեկան շրջանում, որը իր մտաւոր, տնային կեանքից դուրս՝ ոչինչ աշխարհ դեռ չէ ճանաչում. մեր խօսքը այն հասարակութեան մասին է, որը իր ամբողջ ժամանակը անց էր կացնում տնից դուրս, զանազան հասարակական տեղերում։ Մեծ-պասի ընթացքում այդ հասարակական տեղերի փակվելով՝ չեն բացվում հասարակական նոր շրջաններ, որտեղ կարելի լինէր եթէ ոչ միայն զուարճանալ, գէթ մի փոքր էլ մտաւոր մնունդ ստանալ, մի փոքր թարմանալ։ Մեր քաղաքների կլուբները մեծ պասի ընթացքում նախկին պարահանդէսների, և դիմակահանդէսների փոխարէն դասախօսութիւններ չեն կազմում իրանց անդամների համար. թատրոններում՝ գրականական երեկոյթների չէ կարելի սպասել՝ նախկին ներկայացումների փոխարէն։ Ուրեմն ինչ պէտք է անի հասարակութեան այն մասը, որ սովոր է հասարակական տեղեր յաճախել։ Եկեղեցիները, ինչպէս և տօներից առաջ, այնպէս և մեծ պասին, [illegible] նը առաջ է բերում այն, որ կանայք սեղանների երկրպագուների թիւը շատ և շատ մեծանում է, իսկ ընտանեկան շրջաններում կազմակերպվում են թղթախաղների, և լոտո խաղացողների խմբեր,—որոնք ամեն միջոց գործ են դնում սպանելու երկար և տաղտկալի ժամանակը։ Կեանքի միատեսակութիւնը այս եօթն շաբաթների ընթացքում առաջ է բերում միայն այդպիսի երևոյթներ, մանաւանդ որ ուրիշ աւելի օգտաւէտ կերպով ժամանակ անցկացնելու միջոցներ և տեղեր չը կան, որտեղ կարողանային գնալ ցանկացողները, և լսէին մի հետաքրքիր բան, մասնակցէին մի օգտաւէտ գործի կամ ձեռնարկութեան....

*

ԾԽԱԽՈՏԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԴՈՒԻՆԻ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Արդուինի գաւառը 3 վիճակի է բաժանված. Արդուին (յանձուկ միտս), Արդանուշ և Շավշէթ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ

(Նիւթեր հայ-կաթոլիկութեան պատմութեան)

—

Յայտնի է, որ հայ-կաթոլիկութեան առանձին եկեղեցական վարչութիւն ունենալու համար Թիւրքիայում 1830 թվին, յունիսի 6-ին. տեղի ունեցան բաւական խռովութիւններ, որոնց վախճանով հայ-կաթոլիկները, որպէս կրօնական մի առանձին ժողովուրդ, պաշտօնապէս ճանաչվեցան Թիւրքաց կառավարութիւնից։ Մինչև այդ ժամանակ հայ-կաթոլիկ ժողովրդի իրաւունքը գտնվում էր դարձեալ հայոց պատրիարքարանի իրաւասութեան տակ, որը երբեմն մեղմաբար, երբեմն հալածանք հանելով, վերջապէս կարողացաւ հայ-կաթոլիկ առանձին եկեղեցի առաջացնել և բոլորովին դուրս գալ հայոց պատրիարքարանի իրաւասութեան տակից։ Այդ ժամանակներում հայոց հոգևոր կառավարութիւնը բացարձակ ներկայացուցիչ էր իր ժողովրդի թէ կրօնական և թէ քաղաքական խնդիրներում։ Հայոց պատրիարքարանի ձեռքով հաւաքվում էին հայերից արքունական հարկերը և ներկայացվում Թիւրքաց կառավարութեանը։

Երբ Ախալցխան Թիւրքաց հպատակութեան տակ էր գտնվում, այնտեղի հայերը կրօնական իրաւասութեամբ ստորադրված էին Էրզրումի հայ եպիսկոպոսին, որը հաւաքում էր արքունական և եկեղեցական տուրքերը և յանձնում ըստ պատկանելոյն։ Այդ ժամանակ (1796 թուականում) Երուսաղէմի Թէոդորոս արքեպիսկոպոսի հրամանով մի ոմն Սահակ քահանայ գալիս է Ախալցխայ գիւղացի հայ-կաթոլիկներից տուրք ստանալու համար և տալիս է հետևեալ ապահովագիրը, որը հարազատաբար առաջ ենք բերում այստեղ, որը գրված է հին նօտարագիր գրչով հաստ թղթի վրա, գունատ մելանով։

«Զօրութիւն գրոյս այս է, որ հրամանաւ Թէոդորոս Արքեպիսկոպոսին և մեծի նուիրակին սրբոյ Երուսաղէմին, և գիտութեամբ եփրիկենց մահտեսի Յակոբ Աղային կացուցայ փոխանուիրակ Աղսխուրեմին, որ և ի Աղսխայ բնակեալ կաթոլիկ հայերէն ըստ նախնեաց իւրեանց սովորութեան զնուիրական զողորմութիւն առի, զկնի Ստէփան վարդապետին, փոխանորդին Գէորքայ, (եղծուած է) սաղ ստակ, որոյ կէսը կանէ ծև. զուրուշ և տվի զայս դաւիս ի հաստատութիւն զկնի եկելոց և տեսողաց հաճոյ լինել աղերսեմ, գրեցաւ ի ռ. մ. լ. թ. ի փետրվարի ժը իմով ձեռամբ Նուաստս Տէր Սահակ»։

Մի այլ հին գրչագիր նոյնպիսի իմաստով գրված է այսպէս։ «Թուականիս մերոյ ի ռ. մ. խ. դ. ամսին Մարտ ի»։ «Զօրութիւն գրոյս այս է, որ ես մեղսամած Զ'ևոնդ վարդապետս չնորհիս Տեառն և առաջնորդ և տեսուչ կարմիր վանք կոչեցեալ սբ. Աստուածնից և համայն թեմի և վիճակի նորին, արքունական բարձր հրամանով, թագաւորին և սրբազան պատրիարքին Տեառն Զաքարիայ արքեպիսկոպոսին, օրհնութեան նամակն վերոգրեալ թուով մարտի 1-ին եկի ի վիճակն իմ Ախըսխայ քաթոլիկ հայ ժողովրդեան գրիգորէն և խոջայ Յովհաննէսէն և պարոն Անտոնէն և միւս երեցփոխան քուրքչի պաշի պարոն Օհաննէսէն, և մամասախլի պարոն Յեսայէն նաև այս քահանայից և իշխանաց խնդրանօք, վերոգրեալ թուովն, անցելոյն պայմանաւորեցանք պտղի հատուցանեն յամէ յամ, մարտ ամսոյ մէջ կ. զուրուշ. Ախըլցխայ, իւլիտայ վաշէ, արալ, ուտէ և ապասթուման և ետու զայս զապս իմով ձեռամբ, և տեսողաց, և լսողաց հաճոյ եղիցի ամէն»։

Ուրեմն այդ ճշմարտապատում ապացուցական հին ձեռագրերի զօրութեամբ, սրանից 96 տարի առաջ, Ախալցխայի ներկայ վրացախօս հայ-կաթոլիկները, կրօնական իրաւասացութեամբ ստորադրված են եղել հայ-լուսաւորչական եկեղեցոյն, իսկ յետոյ, ռուսաց իշխանութեան ժամանակ, արդէն ունէին իրանց առանձին հոգևոր հայ-կաթոլիկ վարչութիւնը։

Եթէ նրանք վրացի կաթոլիկներ լինէին, այդ դէպքում ոչինչ իրաւունք չէին ունենայ հայ-լուսաւորչական եկեղեցականները նրանց վրա, այլ նրանք ստորադրված կը լինէին լատին եկեղեցականների իրաւասութեանը։

Խմերխէվ։ Սրանցից առաջինը գլխաւորաբար այգեգործութեամբ, երկրորդը հողագործութեամբ և երրորդը, որ թէև ամենից ընդարձակը, բայց ամենից անբարերարն է, անասնապահութեամբ է պարապվում և այս՝ ի հարկէ առաջացած է իւրաքանչիւր վիճակի աշխարհագրական դիրքից։ Արդուինի վիճակը հարուստ է այդիներով, որոնք ամենաընտիր պտուղներ են արդիւնաբերում. սրանց մէջ նշանաւոր է ձիթապտուղը, որ արտահանվում է Բաթում, Թիֆլիս, Ախալցխա և այլն։ Արդանուջի վիճակն ունի բերրի և պարարտ հող, իսկ Շավշէթ-Խմերխէվն ընդարձակ մարգագետիններ։ Բայց կայ մի զբաղում, որը սրանից քանի մի տարի առաջ մի մասնաւոր երևոյթ պէտք էր համարել, իսկ այսօր նա ընդհանրացած և ազգաբնակութեան տնտեսական ամենամեծ պայմանն է կազմած ամբողջ 3 վիճակներում էլ,—այդ՝ ծխախոտի մշակութիւնն է։

Արդուինի գաւառում, ծխախոտի մշակութիւնը սկիզբ է առած հազիւ 20 տարի առաջ։ Իսկզբան քանի մի կալուածատէրներ միայն փորձ փորձեցին ծխախոտ տնկելու, հետևելով Տրապիզոնից Արդանուջ գաղթած մի տրապիզոնցի հայի. այս առաջին փորձերը բաւական յաջողելով, հետզհետէ տարածվեցաւ նրա մշակութիւնը, այնպէս որ տեղական պահանջը յագեցնելու համար արդէն հարկ չը կար օտար տեղի դիմել։ 1876-ին Արդանուջում հիմնվեցաւ առաջին ծխախոտի գործարան, որ միայն տեղական բերքի համար էր. յաջորդ տարին երբ ռուսական զորքերը գրաւեցին Արդանուջը, գործարանն և ամբողջ պատրաստի ծխախոտը, որ մի տեղացի թիւրքինն էր, աւարի դրվեցան։ Այնուհետև ծխախոտի մշակութիւնն սկսաւ ընկնել։ Արդուինի վիճակի Մուրղուլ կոչված ձորի գիւղերը շարունակեցին արդիւնաբերել, բայց շատ փոքր քանակութեամբ։ Իսկ Շավշէթինը բոլորովին անհայտ էր։

Ռուսաց տիրապետութեան առաջին տարիները՝ գաղթականութիւնների հարցի պատճառով հողագործութիւնն առհասարակ յետընկաւ վիճակի մէջ էր մնացած, ուստի ծխախոտի մշակութիւնը նոյնպէս չէր դրաւում ոչ մի երկրագործի։ Բայց 1882-ից յետոյ այդ մշակութիւնն հետզհետէ աւելի ընդարձակեցաւ և այս անցեալ 1887 տարին ամենաառատն էր Արդուինի գաւառում ծխախոտի [illegible]

Ծխախոտի դները մինչև 1886-ի հունձը շատ աննշան են եղել։ Նրա պուդը՝ 1 տեսակի ծախվում էր առ առաւելն 7 ռուբլ, 2-դը 4—5 ռուբլ, իսկ 3-դ կարգին բոլորովին ուշադրութիւն չէր դարձնվում, եթէ առանձին ծախվէր։ Ուստի գիւղացիք այս անպատեհութեան առաջն առնելու մտքով, աւելի մեծ անպատեհութեան մէջ էին ընկնում։ Նրանք մի և նոյն խուրձում և հակում, միմեանց հետ խառնում էին այդ 3 տեսակներից էլ, որով գնողը ստիպվում էր նորից քանդել այդ հակերն ու խուրձերը, և ըստ կարգին չարել բոլոր 3 դանազան տեսակները։ Այս պատճառով էլ գները միշտ ցած էին դրվում և ծխախոտի յարգը կորչում էր։ Խրատվելով դրանից, նոյնպէս և գործին հմուտ վաճառականների տուած աղդարարութիւններից, այժմ գործն աւելի կարգաւորեալ վիճակի մէջ է դրված։ Սակայն այժմ էլ գնողի մեծ պակասութիւն կայ։

Արդուինի գաւառում յայտնի են Արդանուջ և Մուրղուլը ծխախոտի կողմից։ Արդանուջի 1886-ի բերքը առհասարակ լաւ գներով ծախվեցաւ. առաջին տեսակը մինչև 13—15 ռուբլով, երկրորդը 7—10, իսկ երրորդը 3—4 ռուբլ։ Նկատելով այս արժողութիւնը՝ Արդանուջի ժողովուրդը՝ անցեալ 1887-ին բոլորովին անձնատուր եղաւ ծխախոտի մշակութեան։ Թիւրքերը, որոնք գաւառի գլխաւոր հողատէրերն են, համեմատելով հայերին, նուազ մասնակցութիւն ունեցան գործի մէջ։ Իսկ անցեալ տարի Արդանուջի հայերը համեմատաբար ահագին գումարներ վճարելով վարձեցին թիւրքերի արտերը, մշակներ բռնեցին և ամբողջ տարի զբաղվեցան դրանով։ Թիւրքերի մի մասն էլ հետևեց հայերին և Արդանուջի վիճակում դեռ ևս նմանը չը տեսնված առատութիւն պատահեցաւ ծխախոտի։ Այնպէս որ, չը նայելով որ քանի մի տեղ կարկուտն ու ճճուն մեծ վնաս և կոտորած պատճառեցին մշակութեան, այսու ամենայնիւ՝ այսօր աւելի քան տասն հազար պուդ 1887-ի բերք—ծխախոտ կայ պատրաստ, միայն Արդանուջի վիճակում։

Մուրղուլի գիւղերը, որոնք նոյնպէս մեծ հոգատարութեամբ միշտ զբաղվում էին այդ մշակութեամբ, այս տարի յետ մնացին բաւական տեղական հողագործ թիւրքերի՝ Ցաճկաստան գաղթելու անպատեհ մտքի վրա։

Իսկ Շավշէթի վիճակը, որ համեմատելով առաջին 2 վիճակներին շատ աննշան էր միշտ, անցեալ տարի մեծ ճիգեր արաւ այս մասին, և նոյնպէս կարող է քանի մի հազար պուդ ծխախոտ արտահանել։

Ծխախոտի այս զանազան տեսակների մէջ առաջին տեղն է գրաւում միմիայն իրաւամբ Արդանուջի ծխախոտը, որի սերմը Տրապիզոնից է։ Այս տեսակն ունի լայն տերևներ, բաց և մութ դեղին գոյն և բարակ խուզ։ Մուրղուլի ծխախոտը կարմիր, եփված գոյն, փոքր տերևներ և միջակ խուզ ունի։ Իսկ Շավշէթի ծխախոտը նոյնպէս մեծ տերևներ, մութ կարմիր գոյն և թոյլ խուզ ունի։ Դնելով այս զանազանութիւնները, մենք ի նկատի ունենք միայն ընդհանուր տեսակը։ Բացառութիւններ, բնականաբար, ինչպէս ամեն իրի մէջ, նոյնպէս և այստեղ պակաս չեն, որ հետևանքն [illegible] գլխաւորաբար առաւել կամ պակաս խնամքի։

Ծխախոտի արդիւնաբերութիւնը՝ Արդուինի գաւառի և մանաւանդ Արդանուջի վիճակի համար, այժմ մի կարևոր տնտեսական խնդիր է դարձած։ Երկրագործ դասը իր վարելահողի մեծ մասը փոխանակ ըստ առաջնոյն ցորենի, գարիի կամ սիմինդրի յատկացնելու, ծխախոտի է գոհած։ Արհեստաւոր և նոյն իսկ վաճառական դասը՝ նկատելով, որ ոչ արհեստը և ոչ էլ առևտուրը չեն տալիս բաւականաչափ կեանքի ապրուստ և զրաւելով 1886 գներից, մեծ վարձքերով ձեռք բերեց հողագործների լաւագոյն արտերը, և տնկել տուեց ծխախոտը։ Հայերի մեծ մասը, որոնք հող չունէին, իրանց վերջին կօպէկները ծախսելուց յետոյ, դեռ պարտքեր էլ արին այն յոյսով, որ ծխախոտը լաւ գնով կը ծախվի և իրանց թէ պարտքերը կը վճարեն և թէ իրանց աշխատանաց արդիւնքը կուտենան։ Բայց ահա անցեալ աշնան ծխախոտի խուրձերը կապվեցան, հակերը չինվեցան և դեռ մինչև այսօր չեն ծախվում։ Ծխախոտի մշակողների մեծամասնութիւնը յուսահատութեան մէջ է։ Ամենքի յոյսը դրա վրա է և երբ նա չէ ծախվում, իրանք էլ ձեռնունայն ստիպված են սպասել։ Կան թէպէտ քանի մի գնողներ, բայց սրանցից ոմանք հարստահարիչ բաղդախնդիրներ են, որոնք առթից օգուտ քաղելով չնչին գնով են ուզում գնել, իսկ ուրիշները բաւական գումար չունեն։ Իրաց այս վիճակին մէջ, բնական է, որ կանոնաւոր ծխախոտի գործարանների կամ պահեստների տերերը կարող են շատ ձեռնտու գներով և ընտիր տեսակի ապրանք հաւաքել, եթէ յանձն առնէին այժմեանից գործակալներ ուղարկել Արդանուջ կամ Մուրղուլ և Շավշէթ։ Տեղական պլանտատորները մեծ ուրախութեամբ կընդունէին այդպիսիներին, իրանց ճնշող անխիղճ բաղդախնդիրների և վաշխառուների ձեռքից ազատվելու համար։

Հրաւիրում ենք այս մասին ուշադրութիւնն ում հարկն է։

Ա. Սարուխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են հետևեալը, «Այս օրերս մի ալաշկերտցի երիտասարդ, որ մի քանի տարի սրանից առաջ ծառայ է եղել Կարսում մի պարոնի մօտ, ցանկութիւն է յայտնում առժամանակ վերադառնալ իր ծննդավայրը, նորից յետ գալու պայմանով։ Երիտասարդը գիւղը հասնելուն պէս նշանվում է մի աղջկայ հետ, բայց որովհետև իր ծառայութեան վարձի փոխարէն մուրհակ էր ստացել իր տիրոջից, ուստի վերադառնում է Ռուսաստան, փողերը ստանալու։ Բայց հազիւ թիւրքաց սահմանից անցնում է, Իգդիրից 15 վերստ հեռաւորութեան վրա նրան պատահում են երկու զրահաւորված քիւրդեր, որոնք Իգդիրից իրանց գիւղն են գալիս լինում։ Սրանք տեսնելով երիտասարդին իր ընկերի հետ, առաջարկում են մերկանալ. ընկերն ունեցած չունեցածը տալիս է, իսկ երիտասարդը յարձակվում է քիւրդերի վրա, հրացան խլելու դիտաւորութեամբ, սակայն դնդակահարվում է։ Այժմ քիւրդերը ձերբակալված են և բանտումն են։ Այսպիսի դէպքեր առաջին անգամ չէ որ պատահում են ռուս-թիւրքաց սահմանագլխի վրա։»

—

Մարտի 7-ին, երկուշաբթի օր, Թիֆլիսի Կրուժօկի դահլիճներում կայացաւ ֆրանսիական պարահանդէսը։ Դահլիճները լի էին հասարակութեամբ։ Պարահանդէսը շատ կենդանի անցաւ և պարերը տևեցին մինչև 4 ժամ առաւօտեան։ Մեր օպէրայի երգչուհիները յանձն էին առել այդ երեկոյ ծախել ալէգրիի տոմսակները։ Դահլիճի մի կողմում ծախում էին ալէգրիի տոմսակները տ.տ. Լուբկօվսկայա և Զարուդնայա, իսկ միւս կողմում տ.տ. Դվօրեց, Պոլիանսկայա և Կոկովցեվա։ Հասարակութիւնը շրջապատել էր շքեղ տիկիններին և մեծ քանակութեամբ առնում էր տոմսակներ։ Պարեկող տիկինների և օրիորդների մէջ նկատելի էին մի քանի գեղեցիկ զգեստներ։ Աչքի էր ընկնում մի գեղեցիկ աղջիկ մարկիզուհու զգեստով, մի այլ տիկին հագնված էր սպանիուհու ազգային զգեստով, մի երկու տիկիններ կային հայկական ժողովրդական զգեստով և այլն։ Պարահանդէսը բարեգործական նպատակով էր։

—

Պ. Մկրտիչ Բարխուդարեանց, Մոսկվայից, խնդրում է մեզ տպել հետևեալը։ Ներկայ 1888 թվին լոյս կը տեսնէ Մոսկվայում «Հանդէս գրականական և պատմական» երկհատոր ժողովածու։ Այս հրատարակութիւնը, որին մասնակցելու են մեր գրականութեան մէջ անուն ժառանգած (?) հեղինակները, ինչպէս Գամառ-Քաթիպա և ուրիշները, նոյնպէս և շատ նոր ուժեր, պիտի բովանդակէ՝ վէպեր, պատկերներ, զրոյցներ, բանաստեղծութիւններ, ինքնուրոյն, թարգմանական՝ քննադատական, մատենախօսական յօդուածներ, գիտութեան այս կամ այն ճիւղից մատչելի լեզուով քաղուածքներ և այլն։ Առաջին գիրքը բաղկացած կը լինի 300 երեսից և լոյս կը տեսնէ յունիս ամսին։ Բացված է ստորագրութիւն միայն առաջին հատորի համար, որի բաժանորդագինն է Ռուսաստանում 1 ր. 50 կ., իսկ արտասահմանի համար 4 ֆրանկ։ Երկրորդ հատորի մասին առանձին յայտարարութիւն կը լինի, որովհետև մտադիր ենք ծաւալը ընդլայնելու։ Հրատարակչի հասցէն. Москва, Большая Дмитровка, мебл. комн. «Версаль» № 27.

—

Պետերբուրգում հրատարակվող «Нива» շաբաթաթերթի վերջին № 8-ում տպված է Խորէն վարդապետ Ստեփանէի պատկերը, նրա համառօտ կենսագրութեամբ։

—

Թիֆլիսցիներին ծանօթ պ. Սողոմոն Եղիազարեան, որ եղել է մի ժամանակ տեսուչ Ներսիսեան դպրոցի, այժմ, ինչպէս հաստատ աղբիւրներից իմացանք, նշանակվել է Կազանի համալսարանի իրաւաբանական երկու առարկաների պրոֆէսոր (դոցէնտ)։

—

Բաքուի հայ-լուսաւորական դպրոցի աշակերտները հանգանակեցին իրանց մէջ 2 ռուբլի յօգուտ Զէյթունի հրկիզեալների և ուղարկեցին մեզ այդ փողը։ Նախկին 130 ր. 70 կ. գումարի հետ մենք կունենանք այժմ մեր խմբագրատանը 132 ր. 70 կ. յօգուտ Զէյթունի հրկիզեալների։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան 1888 թուականի համար կազմած նախահաշիւներից երևում է, որ քաղաքի 1888 թուի դեֆիցիտը հասնում է 63,407 ռուբլու։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը՝ ահագին և շատ անգամ չռայլ ծախսերից զոյացած դեֆիցիտը ծածկելու համար շարունակում է նորանոր զեկուցումներ ներկայացնել դումային, և նորանոր տուրքեր նշանակելու առաջարկութիւններ անել։ Այդպիսի մի նոր տուրքի հարց յարուցվեցաւ քաղաքային դումայի մարտի 7-ի նիստում։ Քաղաքային վարչութիւնը առաջարկեց տասն կոպեկ գնողի մեծ պակասութիւն կայ։

Արդուինի գաւառում յայտնի են Արդանուջ և Մուրղուլը ծխախոտի կողմից։ Արդանուջի 1886-ի բերքը առհասարակ լաւ գներով ծախվեցաւ. առաջին տեսակը մինչև 13—15 ռուբլով, երկրորդը 7—10, իսկ երրորդը 3—4 ռուբլ։ Նկատելով այս արժողութիւնը՝ Արդանուջի ժողովուրդը՝ անցեալ 1887-ին բոլորովին անձնատուր եղաւ ծխախոտի մշակութեան։ Թիւրքերը, որոնք գաւառի գլխաւոր հողատէրերն են, համեմատելով հայերին, նուազ մասնակցութիւն ունեցան գործի մէջ։ Իսկ անցեալ տարի Արդանուջի հայերը համեմատաբար ահագին գումարներ վճարելով վարձեցին թիւրքերի արտերը, մշակներ բռնեցին և ամբողջ տարի զբաղվեցան դրանով։ Թիւրքերի մի մասն էլ հետևեց հայերին և Արդանուջի վիճակում դեռ ևս նմանը չը տեսնված առատութիւն պատահեցաւ ծխախոտի։ Այնպէս որ, չը նայելով որ քանի մի տեղ կարկուտն ու ճճուն մեծ վնաս և կոտորած պատճառեցին մշակութեան, այսու ամենայնիւ՝ այսօր աւելի քան տասն հազար պուդ 1887-ի բերք—ծխախոտ կայ պատրաստ, միայն Արդանուջի վիճակում։

Մուրղուլի գիւղերը, որոնք նոյնպէս մեծ հոգատարութեամբ միշտ զբաղվում էին այդ մշակութեամբ, այս տարի յետ մնացին բաւական տեղական հողագործ թիւրքերի՝ Ցաճկաստան գաղթելու անպատեհ մտքի վրա։

Իսկ Շավշէթի վիճակը, որ համեմատելով առաջին 2 վիճակներին շատ աննշան էր միշտ, անցեալ տարի մեծ ճիգեր արաւ այս մասին, և նոյնպէս կարող է քանի մի հազար պուդ ծխախոտ արտահանել։

Ծխախոտի այս զանազան տեսակների մէջ առաջին տեղն է գրաւում միմիայն իրաւամբ Արդանուջի ծխախոտը, որի սերմը Տրապիզոնից է։ Այս տեսակն ունի լայն տերևներ, բաց և մութ դեղին գոյն և բարակ խուզ։ Մուրղուլի ծխախոտը կարմիր, եփված գոյն, փոքր տերևներ և միջակ խուզ ունի։ Իսկ Շավշէթի ծխախոտը նոյնպէս մեծ տերևներ, մութ կարմիր գոյն և թոյլ խուզ ունի։ Դնելով այս զանազանութիւնները, մենք ի նկատի ունենք միայն ընդհանուր տեսակը։ Բացառութիւններ, բնականաբար, ինչպէս ամեն իրի մէջ, նոյնպէս և այստեղ պակաս չեն, որ հետևանքն [illegible] գլխաւորաբար առաւել կամ պակաս խնամքի։

Ծխախոտի արդիւնաբերութիւնը՝ Արդուինի գաւառի և մանաւանդ Արդանուջի վիճակի համար, այժմ մի կարևոր տնտեսական խնդիր է դարձած։ Երկրագործ դասը իր վարելահողի մեծ մասը փոխանակ ըստ առաջնոյն ցորենի, գարիի կամ սիմինդրի յատկացնելու, ծխախոտի է գոհած։ Արհեստաւոր և նոյն իսկ վաճառական դասը՝ նկատելով, որ ոչ արհեստը և ոչ էլ առևտուրը չեն տալիս բաւականաչափ կեանքի ապրուստ և զրաւելով 1886 գներից, մեծ վարձքերով ձեռք բերեց հողագործների լաւագոյն արտերը, և տնկել տուեց ծխախոտը։ Հայերի մեծ մասը, որոնք հող չունէին, իրանց վերջին կօպէկները ծախսելուց յետոյ, դեռ պարտքեր էլ արին այն յոյսով, որ ծխախոտը լաւ գնով կը ծախվի և իրանց թէ պարտքերը կը վճարեն և թէ իրանց աշխատանաց արդիւնքը կուտենան։ Բայց ահա անցեալ աշնան ծխախոտի խուրձերը կապվեցան, հակերը չինվեցան և դեռ մինչև այսօր չեն ծախվում։ Ծխախոտի մշակողների մեծամասնութիւնը յուսահատութեան մէջ է։ Ամենքի յոյսը դրա վրա է և երբ նա չէ ծախվում, իրանք էլ ձեռնունայն ստիպված են սպասել։ Կան թէպէտ քանի մի գնողներ, բայց սրանցից ոմանք հարստահարիչ բաղդախնդիրներ են, որոնք առթից օգուտ քաղելով չնչին գնով են ուզում գնել, իսկ ուրիշները բաւական գումար չունեն։ Իրաց այս վիճակին մէջ, բնական է, որ կանոնաւոր ծխախոտի գործարանների կամ պահեստների տերերը կարող են շատ ձեռնտու գներով և ընտիր տեսակի ապրանք հաւաքել, եթէ յանձն առնէին այժմեանից գործակալներ ուղարկել Արդանուջ կամ Մուրղուլ և Շավշէթ։ Տեղական պլանտատորները մեծ ուրախութեամբ կընդունէին այդպիսիներին, իրանց ճնշող անխիղճ բաղդախնդիրների և վաշխառուների ձեռքից ազատվելու համար։

Հրաւիրում ենք այս մասին ուշադրութիւնն ում հարկն է։

Ա. Սարուխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են հետևեալը, «Այս օրերս մի ալաշկերտցի երիտասարդ, որ մի քանի տարի սրանից առաջ ծառայ է եղել Կարսում մի պարոնի մօտ, ցանկութիւն է յայտնում առժամանակ վերադառնալ իր ծննդավայրը, նորից յետ գալու պայմանով։ Երիտասարդը գիւղը հասնելուն պէս նշանվում է մի աղջկայ հետ, բայց որովհետև իր ծառայութեան վարձի փոխարէն մուրհակ էր ստացել իր տիրոջից, ուստի վերադառնում է Ռուսաստան, փողերը ստանալու։ Բայց հազիւ թիւրքաց սահմանից անցնում է, Իգդիրից 15 վերստ հեռաւորութեան վրա նրան պատահում են երկու զրահաւորված քիւրդեր, որոնք Իգդիրից իրանց գիւղն են գալիս լինում։ Սրանք տեսնելով երիտասարդին իր ընկերի հետ, առաջարկում են մերկանալ. ընկերն ունեցած չունեցածը տալիս է, իսկ երիտասարդը յարձակվում է քիւրդերի վրա, հրացան խլելու դիտաւորութեամբ, սակայն դնդակահարվում է։ Այժմ քիւրդերը ձերբակալված են և բանտումն են։ Այսպիսի դէպքեր առաջին անգամ չէ որ պատահում են ռուս-թիւրքաց սահմանագլխի վրա։»

—

Մարտի 7-ին, երկուշաբթի օր, Թիֆլիսի Կրուժօկի դահլիճներում կայացաւ ֆրանսիական պարահանդէսը։ Դահլիճները լի էին հասարակութեամբ։ Պարահանդէսը շատ կենդանի անցաւ և պարերը տևեցին մինչև 4 ժամ առաւօտեան։ Մեր օպէրայի երգչուհիները յանձն էին առել այդ երեկոյ ծախել ալէգրիի տոմսակները։ Դահլիճի մի կողմում ծախում էին ալէգրիի տոմսակները տ.տ. Լուբկօվսկայա և Զարուդնայա, իսկ միւս կողմում տ.տ. Դվօրեց, Պոլիանսկայա և Կոկովցեվա։ Հասարակութիւնը շրջապատել էր շքեղ տիկիններին և մեծ քանակութեամբ առնում էր տոմսակներ։ Պարեկող տիկինների և օրիորդների մէջ նկատելի էին մի քանի գեղեցիկ զգեստներ։ Աչքի էր ընկնում մի գեղեցիկ աղջիկ մարկիզուհու զգեստով, մի այլ տիկին հագնված էր սպանիուհու ազգային զգեստով, մի երկու տիկիններ կային հայկական ժողովրդական զգեստով և այլն։ Պարահանդէսը բարեգործական նպատակով էր։

—

Պ. Մկրտիչ Բարխուդարեանց, Մոսկվայից, խնդրում է մեզ տպել հետևեալը։ Ներկայ 1888 թվին լոյս կը տեսնէ Մոսկվայում «Հանդէս գրականական և պատմական» երկհատոր ժողովածու։ Այս հրատարակութիւնը, որին մասնակցելու են մեր գրականութեան մէջ անուն ժառանգած (?) հեղինակները, ինչպէս Գամառ-Քաթիպա և ուրիշները, նոյնպէս և շատ նոր ուժեր, պիտի բովանդակէ՝ վէպեր, պատկերներ, զրոյցներ, բանաստեղծութիւններ, ինքնուրոյն, թարգմանական՝ քննադատական, մատենախօսական յօդուածներ, գիտութեան այս կամ այն ճիւղից մատչելի լեզուով քաղուածքներ և այլն։ Առաջին գիրքը բաղկացած կը լինի 300 երեսից և լոյս կը տեսնէ յունիս ամսին։ Բացված է ստորագրութիւն միայն առաջին հատորի համար, որի բաժանորդագինն է Ռուսաստանում 1 ր. 50 կ., իսկ արտասահմանի համար 4 ֆրանկ։ Երկրորդ հատորի մասին առանձին յայտարարութիւն կը լինի, որովհետև մտադիր ենք ծաւալը ընդլայնելու։ Հրատարակչի հասցէն. Москва, Большая Дмитровка, мебл. комн. «Версаль» № 27.

—

Պետերբուրգում հրատարակվող «Нива» շաբաթաթերթի վերջին № 8-ում տպված է Խորէն վարդապետ Ստեփանէի պատկերը, նրա համառօտ կենսագրութեամբ։

—

Թիֆլիսցիներին ծանօթ պ. Սողոմոն Եղիազարեան, որ եղել է մի ժամանակ տեսուչ Ներսիսեան դպրոցի, այժմ, ինչպէս հաստատ աղբիւրներից իմացանք, նշանակվել է Կազանի համալսարանի իրաւաբանական երկու առարկաների պրոֆէսոր (դոցէնտ)։

—

Բաքուի հայ-լուսաւորական դպրոցի աշակերտները հանգանակեցին իրանց մէջ 2 ռուբլի յօգուտ Զէյթունի հրկիզեալների և ուղարկեցին մեզ այդ փողը։ Նախկին 130 ր. 70 կ. գումարի հետ մենք կունենանք այժմ մեր խմբագրատանը 132 ր. 70 կ. յօգուտ Զէյթունի հրկիզեալների։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան 1888 թուականի համար կազմած նախահաշիւներից երևում է, որ քաղաքի 1888 թուի դեֆիցիտը հասնում է 63,407 ռուբլու։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը՝ ահագին և շատ անգամ չռայլ ծախսերից զոյացած դեֆիցիտը ծածկելու համար շարունակում է նորանոր զեկուցումներ ներկայացնել դումային, և նորանոր տուրքեր նշանակելու առաջարկութիւններ անել։ Այդպիսի մի նոր տուրքի հարց յարուցվեցաւ քաղաքային դումայի մարտի 7-ի նիստում։ Քաղաքային վարչութիւնը առաջարկեց տասն կո-

---

այն բաւական չէ, նրանց այն ժամանակի ունեցած քահանայից, եկեղեցական երեցփոխների անունները, արդէն պարզ երևում է, որ հայ-կաթոլիկական են, և ուրեմն նրանք եղել են հայ-կաթոլիկներ։

Մթթէ կարելի է կարծել, որ վրացախօս հայ-կաթոլիկները, եթէ վրացի լինէին կաթոլիկութեան դիմած, իրանց եկեղեցական արարողութիւնները չէին կատարի կամ վրաց և կամ լատինական լեզուով, ինչ պատճառ ունէին նրանք հայկական ժամակարգութեան կատարելուն. և մինչև այսօր թէ պատարագը, և թէ քահանայական զգեստները հայ-կաթոլիկ եկեղեցու սովորութեան համաձայն են կատարում։

Լատինականութեանը դիմել են միայն մի քանի եկեղեցականներ, և այդ դեռ ապացոյց չէ, որ մնացած ժողովուրդն էլ պէտք է դիմէ լատինական ծէսին, մինչդեռ յայտնի է, որ ժողովուրդը, այդ կրօնի հաւատարիմ պաշտպանը, միշտ եղել է հաւատարիմ իր եկեղեցուն և արարողութեանը։ Մի քանի անարժան եկեղեցականների կատարած գործերն երբէք առիթ չեն կարող լինել ժողովրդին, որ նա մոռանայ իր ազգային. եկեղեցին, մայրենի լեզուն և հեռանայ իր հարազատ եկեղեցուց, որի պահպանութեան համար ժողովրդի նախնիքը դարերի ընթացքում թափել են առատ արիւն և արտասուք։

Բազմաթիւ են այն օրինակները, երբ դանազան պատճառներից մէկը հեռանում է իր մայրենի եկեղեցուց, այդպիսին իր նոր դաւանութեան մէջ միշտ մոլեռանդ է լինում, նա մոռանում է անցեալը, յափշտակվում է ներկայի փառքից և դիմում է միշտ խախուտ ապագային։

Այնպէս են նաև այն վրացախօս հայ-կաթոլիկների լատինական արարողութեան դիմած քահանաները, որոնք հեռացել են մայրենի եկեղեցուց, մտել են կաթոլիկութեան մէջ, և այդ լատինածէս կաթոլիկութիւնը կամենում են տարածել նաև վրացախօս հայ-կաթոլիկների մէջ։

Եւ իրաւի, ինչին վերագրել այն տխուր փոխադարձ յարաբերութեան ձևը, որ այժմ ունի Թիֆլիսի հայ-կաթոլիկ ժողովուրդը իր լատին պատերների հետ։ Թիֆլիսի ներկայ հայ-կաթոլիկների նախնիքը միթէ կարող էին գուշակել, որ ապագայում իրանց արդար վաստակով կառուցված եկեղեցին պէտք է դառնայ լատինական եկեղեցի, այնտեղից հեռանայ հայկական ժամակարգութիւնը և տիրապետող լինի լատինական ծէսը, և այն էլ, վրացախօս հա-կաթոլիկների ձեռքով։

Միթէ Թիֆլիսի հայ-կաթոլիկները պէտք է հանդարտութեամբ տանեն այն բարոյական ծանր հարուածը, որ անցեալ ժամանակներումս Թիֆլիսեցի մի հայ-կաթոլիկ ննջեցեալի յուղարկաւորութեանը տեղի ունեցաւ, երբ յարգելի պատերը մերժել է մի անգամ դռնէ «Հայր մերն» հայոց լեզուով ասելը։

Եւ միթէ Թիֆլիսի, Ախալցխայի, Քութայիսի, Գօրու հայ-կաթոլիկներին աւելի քաղցր, և սրբազան պարտականութիւն չէ սրտանց սիրել իրանց մայրենի լեզուով կատարած ժամերգութիւնները, քան թէ անհասկանալի եղանակով դիմել լատինականութեան դիրքը և մոռանալ մեր խնկելի նախահօրց շարականները, հոգեբուխ մեղեդիները և սքանչելի ճոխ երգերը և արարողութիւնները, որոնք իրանց եղակի կանոնաւորութեամբ ներկայացնում են բուն ազգային ոգի և բնաւորութիւն։

Հայ-կաթոլիկ ժողովրդի համար աւելի քաղցր և սիրելի պէտք է լինի դիմել իր քահանային և սրտանց «հաւատով խոստովանիմը» ասել, քան թէ լսել իրան անհասկանալի երգեհոնի երաժշտութիւնը, և լատինական արարողութիւնները։

Այժմեանից իսկ, հաստատապէս կարելի է ասել, որ վրացախօս հայ-կաթոլիկներին մնում է որոշել երկու վճռողական ճանապարհ, կամ պահպանել իրանց եկեղեցական իրաւունքները և պահանջել հայ-կաթոլիկների ծխական քահանայ և անխափան կատարել հայկական ժամակարգութիւնը և կամ անպայմանապէս հրաժարվել հայ-կաթոլիկութիւնից և դիմել լատինականութեանը։ Բայց այդ երկու նշանաւոր խնդիրներն այնքան փափուկ ու կենսական են, որ անկարելի է հեշտութեամբ վճռողականութեան դիմել, և որի համար պահանջվում է դիտակցութիւն և խոհական մտածողութիւն։

Հետևեալ յօդուածով խոստանում ենք չօշափել այդ երկու հարցերը, ցոյց տալով մեր կրօնակից վրացախօս հայ-կաթոլիկներին այն բոլոր եկեղեցական իրաւունքները, որոնց վրա ամրացած է հայ-կաթոլիկների եկեղեցին և այն պատկառելի սրբազործն օրէնքները և հաստատութիւնները, որոնցով պաշտպանված են հայ-կաթոլիկների ժողովրդեան իրաւունքները։

Պետրոս Բէջուրեանց

պէկի տուրք վերցնել գիւղացիներից, որոնք բերում են քաղաք զանազան մթերքներ և իրանց բեռներով կանգնում են քաղաքային հրապարակների վրա՝ վաճառելու համար։ Այդ նոր տուրքի հարցը, որը պէտք է վերցնվի գիւղացիներից՝ քաղաքային հրապարակների վրա կանգնելու համար, մեծ վիճաբանութիւններ յարուցեց դումայի մէջ։ Զայնաւորների մի մասը պնդում էր, որ անարդարութիւն է գիւղացիներին այդպիսի տուրքի ենթարկել, և դրանով նպաստել կարևոր մթերքների աւելի թանգանալուն, որը շատ զգալի կը լինի քաղաքի աղքատ ազգաբնակութեան համար։ Վարչութեան անդամ Խրմայլով ջերմ կերպով պաշտպանեց վարչութեան առաջարկը և դումայի ձայների առաւելութեամբ վճռեց վերցնել գիւղացիներից 10 կոպէկի տուրքը քաղաքային հրապարակների վրա կանգնող բեռների համար։

—

Մահմետականների Նօվրուզ-Բայրամ նշանաւոր տօնը արդէն ոկսվեցաւ և, ինչպէս յայտնի է, կը տևի երեք օր։ Ամենա 8-ին Թիֆլիսաբնակ պարսիկները խմբով գնային Թիֆլիսի պարսից հիւպատոսարանը, շնորհաւորելու հիւպատոսին տօնի առիթով։

—

Շուտով գործածութեան մէջ պէտք է մտնեն նոր տեսակի թղթադրամներ։ Փոխոխութեան կենթարկվին 1, 3, 5, 10 և 25 ռուբլիանոցները։ 100 ռուբլիանոցը կը մնայ այնպէս, ինչպէս առաջ էր։

—

Քաղաքային դումայի մարտի 7-ին կայացած նիստում, հերթական մի քանի հարցեր վերջացնելուց յետոյ կարդացվեցաւ ձայնաւոր Մ. Թամամշեանի մի զեկուցում, որով նա առաջարկում է քաղաքային սպանդանոցը չը շինել Նաւթլուղի մոտ, ինչպէս այդ վճռված է դումայի անցեալ տարվայ յունիսի 15-ի նիստում, այլ, ի նկատի ունենալով քաղաքացիների շահերը, սպանդանոցը շինել քաղաքից ոչ շատ հեռու։ Պ. Թամամշեան առաջարկում է իբրև յարմար տեղ՝ Միրզոեվներին պատկանող հողը, որ գտնվում է քաղաքից ոչ շատ հեռու, կասի գործարանին կից։ Վիճաբանութիւններից յետոյ դուման, ձայների առաւելութեամբ, վճռեց ոչնչացնել յունիսի 15-ի վճիռը։ Իսկ թէ որտեղ պէտք է շինել սպանդանոցը, —այդ հարցի քննութիւնը դուման յետաձգեց մինչև յաջորդ նիստը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Մեր թղթակիցներից մէկը հաղորդում է. մեզ հետևեալ տեղեկութիւնները Թիւրքիայից։ Կ. Պոլսի կաթոլիկ հայերը մի մեծ կորուստ կրեցին Անտոն բէյ Մըսբրլեանի անձի մէջ, որ այդ քաղաքի նշանաւոր գերդաստաններից մէկին էր պատկանում։ Անտոն բէյ հարուստ վաճառական էր և յայտնի էր իր բարեգործութիւններով յօդուտ ազգային հաստատութեանց։ Նա միշտ հաղարներով էր նուիրում։ Հանգուցեալը նշանաւոր կտակ է թողած, որով նուիրում է Կ. Պոլսի հայ կաթոլիկաց Ցակոբեան հիւանդանոցին հազար Օսմանեան լիրա և հիւանդանոցին կից հայ-կաթոլիկաց ազգային վարժարանին երկու հազար Օսմ. լիրա, ընդամենը աւելի քան 30,000 ռուբլի։

Կ. Պոլսի լրագիրներում հրատարակված են Միացեալ ընկերութեանց պարահանդէսի կարգադիր յանձնախմբի ցուցակը։ Ինչպէս միշտ, այս անգամ էլ հայ-կաթոլիկները մեծ մասնակցութիւն են ունեցած գործի մէջ։ Պարահանդէսը, ինչպէս ձեզ յայտնի է արդէն, պիտի տրվի ընդհանուր նախագահն էլ Օսմանեան կայսերական բանկի ընդհանուր դիրեկտոր, անգլիացի Ֆոսթերն է։ Ցանձնախմբի գանձապահ ընտրվել է դարձեալ պ. Ժոզէֆ Ազարեան (հայ-կաթոլիկ)։ Ցանձնախմբի անդամների մէջ, բացի կաթոլիկ հայերից, կան նաև նշանաւոր թիւրքեր։

Փարիզի «Débats» լրագրից առնելով Կ. Պոլսի լրագիրներում հրատարակված է հետևեալ լուրը։ Հռոմի պապը հանդուցեալ Հասունեանի տեղ ուզում է հայ կարդինալ նշանակել այժմեան պատրիարք կաթողիկոս Ազարեանին։ Բայց Ազարեանց՝ կարդինալ ընտրվելուց յետոյ, չը պիտի թողնէ իր աթոռն ու պաշտօնը, այլ նոյնը պիտի չարունակէ դարձեալ ճիշդ այնպէս, ինչպէս որ փարիզի, Վիէննայի և այլ արքեպիսկոպոսները՝ թէ ընդհանուր թեմական կառավարիչներ են և թէ միանդամայն կարդինալներ։ Պապը մտադիր է եղել այս ընտրութիւնն անել Զատկի տօների մօտ, երբ ուրիշ կարևոր խնդիրների համար կարդինալների դաղտնի ժողով պիտի դումարէ։

«Մշակում» յիշված էր արդէն «Le mal d'Orient» անունով գրքի մասին, որ նորերումս Փարիզումն է հրատարակվել։ Այս հրատարակութիւնը վերին աստիճանի հետաքրքրական է. նա պատկերացնում է Տաճկաստանի ներկան իր ամբողջ ծանր վիճակով։ Մի առանձին գլուխ էլ նուիրված է հայերիս։ Ուշադրութեան արժանի են հեղինակի դիտողութիւններն ու դատողութիւնները հայ ազգի վրա։ Գրքի հեղինակը իր յայտնած տեսակէտի կողմից հայ ազգի վերաբերմամբ «Մշակի» գաղափարակից կարող է համարվել։

Հրատարակվեցաւ «Հանդէս-Ամսօրեայի» մարտի համարը։ Տետրակը բովանդակում է. «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրա», որ առաջին ընդարձակ քննադատութիւնն է մեր մէջ, այս նիւթի վրա, «Ազգային հրատարակութիւնք 1887 տարվայ», պրոֆէսսոր Պատկանեանի հրատարակած «Մինասի Թոխմախեցւոյ» հեղինակութեան նոր և ճշդագոյն ձեռագիրը՝ հանդերձ լեզուագիտական դիտողութեամբ, որ գտնված է Տրանսիլվանիայի Հայաքաղաքի հայ եկեղեցու մատենադարանում, «Քննադատութեան պաշտօնն ու նպատակը», «Պ. Աճեմեանի Լոյս և Ստուերք», «Վատիկանեան Արուեստահանդէս» (Կ. Պոլսի հայ-կաթոլիկների՝ պապին ընծայած փառաւոր ուրարի, և Գրէվիի նուէրների պատկերները), «Գեղարուեստք Հայոց», հիմնվելով դոկտոր Լիւբկէի և պ. Մուրիէի վրա և այլն։ Երևում է, որ Վիէննայի Մխիթարեանների և մասնաւորապէս մեր նշանաւոր լեզուագէտ Այտընեանի բաղձանքն է՝ որքան կարելի է, կատարելագործել և ընդհանրութեան օգտակար դարձնել «Հանդէսը»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 1/13 մարտի

Ցայտնի է արդէն, որ անցեալ տարւոյ յուլիս ամսոյ մէջ ի Զէյթուն պատահած աղէտալի երերում մը աճիւն և աւերակ դարձրած էր գրեթէ ամբողջ քաղաքն իւր եկեղեցիներով և վարժարաններով։

Մեր օգոստափառ և հայրագորով կայսրն, ի լուր այս աղէտից, թշուառ հրկիզելոց ուտեստ և պատսպարան շնորհելու համար, հարկ եղած հրամաններն բարեհաճած էր տալ, որք ամոքեցին հրկիզելոց ցաւերն և հայ ազգն, ինչպէս ամեն առթի մէջ, այս անգամ ևս առթի ունեցաւ օրհնել իւր սիրեցեալ վեհապետին անունն։

Ազգային Պատրիարքարանն ալ, ի զահոյից կայսերական տրուած սոյն առաքինական օրինակին հետեւելով, փութաց կազմել զՑանձնաժողովս, պաշտօն տալով նմա վերաշինել այրացաւեր եկեղեցիներն ու վարժարաններն։

Ուրախ եմք յայտարարել, թէ ի Տաճկաստան, ի Մանչեսթր, ի Բարիզ և յայլ քաղաքս գտնուած մերազնեայք փութով պատասխանեցին մեր հրաւէրին և Ռուսաստանի ազգայինք ալ, ըստ օրհնածիր կոնդակի Վեհափառ Հայրապետին մերոյ, իւրեանց առատ նուէրներն չը զլացան ուղարկել մեզ, և Ցանձնաժողովս փութաց ի Զէյթուն ղրկել իւր պատուիրակ Գույումճեան մեծ. Քերովբէ էֆէնտին, որ առանց որ և է փոխարինութեան, ստանձնեց սոյն կարի ծանր պաշտօնն և նորա անձնուէր և անխոնջ ջանից շնորհիւ կարելի եղաւ սուղ միջոցի մէջ վերաշինել՝

ա. Զորս եկեղեցիք՝ ս. Լուսաւորիչ, ս. Յովհաննէս, ս. Սարգիս և ս. Աստուածածին։

բ. Մէկ մեծ վարժարան քաղաքին կենտրոնն, հիմնայատակ եղած ս. Ցակոբ եկեղեցւոյ գեղեցիկ վերայ, այնպիսի ընդարձակ, բարձր և հոյակապ, որոյ նմանն ոչ թէ ի Զէյթուն, այլ և մօտակայ քաղաքաց մէջ իսկ չը գտնուէր։

գ. Երկու ծաղկոց մանչոց և աղջկանց համար ս. Սարգսի թաղն, նմանապէս երկու ծաղկոց ս. Լուսաւորչայ թաղն։

դ. Մի վարժարան ս. Աստուածածնայ թաղն։

ե. Մի վարժարան Զէյթունէն երեք ժամ հեռու Արեղնայ Վարդանեան գիւղն։

զ. Մի եկեղեցի ի Խեպի գիւղ և մի եկեղեցի ի Ծէտէ գիւղ։

է. Երկու լուսատեղի՝ մին ս. Աստուածածնայ թաղն և միւսը Պօղ-Պայխի թաղն։

ը. Երկու աղբիւր՝ մին ս. Աստուածածնայ թաղն և միւսն ս. Լուսաւորչայ թաղն։

Սոյն եկեղեցիներու և վարժարանաց մէջ թէև եկեղեցական արարողութիւնք և դասախօսութիւնք կը կատարուին այսօր, սակայն վերահաս ձմրան պատճառաւ մի քանին չեն կրցած կատարելագործուիլ։

Լիայոյս եմք, որ ի գարնան հեղհեղաէ հասանելիք հանդանակութեանց արդիւնքով պիտի կարենան շինուիլ և ամբողջանալ։

Սոյն ազգային հաստատութեանց վերաշինութենէն զատ, Ցանձնաժողովս մօտակայ քաղաքներէն 35,000 օխայ ցորեան դնել տալով՝ դրամական նպաստից հետ բաշխել տուաւ զայնս կարօտելոց, որք ամառուան երաշտութենէն սոլու ճիրանաց մատնուելու վտանգին մէջ կը գտնուէին. բաց աստի Մարաշէն մի բժիշկ բերել տալով և հարկ եղած դեղօրայքն ղրկելով հրկիզելոց առողջական վիճակն դարմանեց և շատ մը համաճարակ հիւանդութեանց առաջքն կարող եղաւ առնուլ։

Այս ամեն օգնութիւն հրկիզելոց ընձեռած ժամանակ, Ցանձնաժողովս տանց շինութեան համար թէև յատկապէս նպաստներ բաժանեց, բայց այս օգնութիւնք աննչան մի արդիւնք պիտի ունենային, եթէ Նորին կայսերական վեհափառութիւնն իւր անսպառ ողորմածասիրութեամբն յօգնութիւն փութալ չը բարեհաճէր. երկու անգամուն ընդամենն 3,000 ոսկի բաշխել տուաւ, որ բարդուելով Ցանձնաժողովոյս յատկացուցած նպաստից, մեր պատուիրակին աջակցութեամբ և հակողութեամբ կարելի ըրաւ հրկիզելոց վերաշինել իւրեանց արնակներն։

Այժմ 40-էն աւելի տուներ շինուած կան, և մնացորդաց համար թէև դրամ տրուած է, այլ գարնան պիտի կարենան շինուիլ. միայն թէ ուրախալի է որ ձմրան եղանակին մէջ ամեն ոք պատսպարուած է և ոչ ոք մնացած է բացօդեայ։ Որչափ շնորհապարտ լինելու ենք վերին նախախնամութեան որ կը գտնուինք Նորին Կայսեր. Վեհափառութեան Ապդուլ-Համիտ կայսեր հայրական հովանաւորութեան ներքև, որ իւր հպատակաց անդորրութիւնն ու երջանկութիւնն իւր յարաժամ մտադրութեանց առարկայ ընելով՝ երբէք չը դադրիր ամեն առթի մէջ իւր անբաւ գթասրտութեանն լիուլի ապացոյցներն տալ։

Ազգին իրաւացի հետաքրքրութիւնն յագեցնելու համար, սոյն համառօտ տեղեկութիւններն հաղորդելով, յանձնաժողովս իւր համարատուութեան պարտքն լրացուցած չը համարիր երբէք։ Երբ հանդանակութիւնք վերջանան և դոյացեալ արդիւնքով շինութիւնք աւարտին, յանձնաժողովս պիտի փութայ Ազգ. կենդր. վարչութիւնէն վաւերացեալ մի տեղեկագրով հաշիւն տալ այն դրամոց որք այնչափ առատաձեռնութեամբ շնորհվեցան ի նպաստ հրկիզելոց Զէյթունի։

Ի դիմաց յանձնաժողովոյ, վերաշ. ազգ. հրկիզ. հաստատ. Զէյթունի՝ ատենապետ Պատրիկ Ս. Կիւլպէնկեան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Եթէ հաւատանք Լօնդոնից Վիէննայի կիսապաշտօնական լրագիրներին հաղորդած տեղեկութիւններին, Կ. Պոլսի անգլիական դեսպանը հրաժարական է ստացել իր կառավարութիւնից բոլորովին չը խառնվել Ռուսաստանի և Բ. Դրան մէջ եղած յարաբերութիւններին՝ բուլգարական հարցի առիթով։

—Կ. Պոլսում տեղեկութիւն է ստացված, որ Ֆիլիպօպոլում մարտի սկզբներին ձերբակալված են աւելի քան քառասուն օֆիցէրներ։

—Բէլգրադից հեռագրում են, որ վերջին ընտրութիւնների ժամանակ՝ արմատականները փաւաւոր յաղթութիւն են տարել։

—Ցայտնի է, որ Հէրբերտ Բիսմարկ Լօնդոն գնաց, և նրա այդ գնալը, ինչպէս համոզված է-լին դիպլոմատական շրջաններում, կապ ունէր բուլգարական հարցի հետ։ Այժմ Վիէննայում տեղեկութիւններ են ստացված, որ Հէրբերտ Բիսմարկ աշխատում էր անգլիական կառավարութիւնը թեքել ռուսաց կառավարութեան պահանջների կողմը, որոնք վերաբերում են Բուլգարիային և առանձնապէս պրինց Ֆերդինանդին։

—Պրոֆէսսոր Վալդէյեր քննելով գերմանական այժմեան կայսր Ֆրիդրիխի, որը ինչպէս յայտնի է կոկորդի հիւանդութիւն ունի, խորխը, և մանրադիտական հետազօտութիւններ անելով, այն եզրակացութեան է հասել, որ Ֆրիդրիխ յիրաւի ունի խեցգետնի հիւանդութիւն, և այն էլ շատ վտանգաւոր տեսակից։

—Բերլինից գրում են, որ գերմանական այժմեան կայսր Ֆրիդրիխ Սան-Ռէմոից վերադարձաւ Բերլին իր սեփական ցանկութեամբ, որովհետև դեռ Վիլհէլմի ծանր հիւանդութեան ժամանակ շատերը աշխատում էին խնամակալ նշանակել տալ թագաժառանգ Վիլհէլմին։ Մի քանի լրագիրներ հաղորդեցին մինչև անգամ, որ Ֆրիդրիխի Սան-Ռէմոից գալը ունի իր քաղաքական նշանաւոր պատճառները։ Դեռ Ֆրիդրիխ Բերլին չեկած, այդտեղ լուրեր էին տարածվել, որ նա՝ նստելով գերմանական գահի վրա, խնամակալուհի պէտք է նշանակի իր կնոջը, իսկ իր որդի Վիլհէլմին պէտք է տայ միմիայն զինուորական մասի կառավարութիւնը։ Ինչպէս յայտնի է արդէն, նոր կայսրը մինչև այժմ էլ չէ արել ոչ մէկը և ոչ միւսը։

—Վիէննայից հեռագրում են Պետերբուրգի լրագիրներին հետևեալը. «Կօբուրգեան պրինցը հեռագրով յայտնեց իր եղբայրներին, որ վճռել է մեռնել Բուլգարիայում։»

—Փարիզից հեռագրում են, որ այնտեղ փողոցներում սկսեցին վաճառել Վիլհէլմ կայսրի ծաղրական պատկերը. ոստիկանութիւնը խիստ միջոցներ ձեռք առաւ դրա առաջն առնելու համար, և Ֆլուրանս իր խորին ցաւակցութիւնը յայտնեց գերմանական դեսպանին այդ վարմունքի համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական մի լրագրում ապված է հետևեալը՝ իրլանդական կեանքից վերցրած։

—Բժիշկ (վերջացնելով հիւանդի նայելը) «Ուրեմն ես ձեզ կուղարկեմ դեղ, և այդ դեղը պէտք է ընդունել օրը երեք անգամ՝ կերակուր ուտելուց յետոյ։»

—Հիւանդ. «Ուղարկեցէք ինձ, պ. բժիշկ, դրա հետ միասին և մի որ և իցէ բան ուտելու համար»....

* * *

Պօլսից հեռագրում են «Times» լրագրին, որ իսլամութիւն ընդունած Շահպազ էֆէնդին աքսորվեցաւ Տրիպօլիս (Աֆրիկա)։

* * *

Կէմբրիջի համալսարանի խորհուրդը յայտնեց, որ դէմ է կանանց գիտական աստիճաններ տալու մասին։

* * *

Ցուցահանդէսներ ցուցահանդէսների հետևից, մայիսին Բերլինում բացվելու է ամեն տեսակ շքերի միջազգային ցուցահանդէս։

* * *

Նորերումս Անգլիայի մի եպիսկոպոս, հրապարակական մի ճառ խօսելով մարդկանց դիակները այրելու հարցի մասին, յայտնեց, որ դիակներ այրելը չէ հակասում քրիստոնէական վարդապետութեան։

* * *

Բերլինից Պետերբուրգի լրագիրները ստացել են հեռագրով հետևեալ մանրամասնութիւնները Վիլհելմ կայսրի կեանքի վերջին րոպէների վերաբերութեամբ. «իր մահուանից մի փոքր առաջ Վիլհելմ խմեց մի բաժակ շամպանիա գինի և կերաւ մի քանի ոստրէ. իշխան Բիսմարկ, որ ներկայ էր կայսրի մահուան տագնապին, լաց եղաւ։ Աւգուստա կայսրուհին բռնել էր մեռնող կայսրի ձեռքից»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ Այսօր երեկոյեան արտակարգ դնացքով բարեհաճեցին Պետերբուրգ վերադառնալ թագաժառանգը և Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ Անդրանիկը։

ԲԵՐԼԻՆ, 7 մարտի։ Հրատարակված է պրուսական սէյմին ուղղած արքայական հաղորդագրութիւնը. Ֆրէդրիխ III անկարող լինելով երդվել անձամբ, գրաւոր երդում է տալիս անխախտ պահպանել սահմանադրութիւնը, և յոյս է յայտնում հասնելու իր նպատակին, այն է ժողովրդի երջանկութեան և բարեկեցութեան։ Բէյխստագին ուղղած հաղորդագրութեան մէջ կայսրը խոստանում է՝ պահպանել պետական սահմանադրութիւ-

նը և դաշնագրերը, պաշտպանել պետութեան իրաւունքը, ազատութիւնը, կարգը և պատիւը, հոգալով խաղաղութեան պահպանութեան մասին։ Զօրաբանակի զարգացնելը կայսրը համարում է իբրև իր ծնողի կտակը։

ՓԱՐԻԶ, 7 մարտի։ Բուլանժէի կողմնակիցները հրատարակեցին մի հրաւէր՝ երկու դեպարտամենտների ընտրողներին ուղղած, որի մէջ պախարակում են կառավարութիւնը և պարլամենտը Բուլանժէի կողմից։ Պարլամենտի ծայրահեղ ձախակողմեանները վճռեցին մի մանիֆեստ հրատարակել այդ հրաւէրի դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ Հրատարակված է զինուորական-աղանիների փօստերի կանոնադրութիւն, որոնք պէտք է կազմակերպվեն բերդերում և ուրիշ տեղերում։

ԲԵՐԼԻՆ, 8 մարտի։ Պալատական և զինուորական շրջաններում՝ Մեծ-Իշխանների իրանց յանձնարարութեան փայլուն և աջող կերպով կատարելը համարում են իբրև բարեյաջող զրաւական ապագայ յարաբերութիւնների համար։ Ռուսաց զինուորական պատգամաւորութիւնների անդամները, որոնց երէկ ընդունեց կայսր Ֆրիդրիխ, բերկրութեամբ են պատմում այն մասին, թէ ինչպէս կայսրը ողորմածաբար էր վարվում իրանցից իւրաքանչիւրի հետ։

ՓԱՐԻԶ, 8 մարտի։ Մինիստր նախագահը յայտնեց պատգամաւորների ժողովում, որ Բուլանժէի վարմունքի պատճառով, կարգապահական պատժից յետոյ, որին նա ենթարկված էր, կառավարութիւնը վճռել է դիմել՝ նրա վերաբերմամբ ուրիշ միջոցների, որոնց մասին վաղը կը հաղորդվի պարլամենտին։ Ծայրահեղ ձախակողմեանները բոլոր ֆրանսիական հայրենասէրներին ուղղած իրանց մանիֆէստի մէջ յորդորում են ֆրանսիացիներին ցոյցեր չանել Բուլանժէի օգտին, որովհետև այդ բանը կարող է հասցնել մէկի տիրապետութեանը, որի հետևանքը կը լինի ազատութեան ոչնչանալը ներքուստ և անաջողութիւն արտաքուստ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ Արդարադատութեան և ֆինանսների մինիստրի համաձայնութեամբ Պետական խորհրդին առաջարկված է մի նախագիծ, որը վերաբերում է դրուագաւոր տուրքերի համար այժմ գոյութիւն ունեցող կանոնադրութեան փոփոխութիւններին և յաւելուածներին նօտարական քաղուածքների և ակտերի համար։ Ֆինանսների մինիստրութեան մէջ քննվում է «ցմահ թոշակներ տվող I ռուսական ընկերութեան» կամ թէ ընդհանուր խնայողական կասայի կանոնադրութիւնը։ Կազմակերպութեան համար որոշած գումարը 200,000 է։ Ընկերութեան հիմնական սկզբունքները նոյնն են, ինչպէս և զինուորական և ծովային վարչութիւնների խնայողական կասաներինը։ Մասնակցութեան իրաւունքը պայմանաւորվում է չնչին վճարով։

ՐՕՍՏՕՎ, (Դոնի վրա) 8 մարտի։ Քաղաքի մօտ Դոնը ազատվեցաւ սառուցից։

ՕԴԷՍԱ, 8 մարտի։ Շոգենաւերը սկսեցին իրանց կանոնաւոր երթևեկութիւնը Օդէսայի և նաւահանգիստների մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Պսկովի նահանգապետ Իսկուլ-Ֆօն-Գիլզենբանդտ սենատոր է նշանակված։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ քաղաքացիական վարչութեան պաշտօնեաների համար թոշակային դրամարկղին վերաբերեալ կանոնադրութիւնը արդէն մշակված է և կուղարկվի մինիստրներին վերջնական որոշում տալու այդ գործին։

ՓԱՐԻԶ, 9 մարտի։ Պատգամաւորների ժողովում մինիստր-նախագահ Տիրար յայտնեց, որ Բուլանժէ իր յայտնի անհնազանդութեամբ և զինուորական կարգապահութեան խախտելով ասելի ևս խիստ պատժի է արժանի, և այդ պատճառով կառավարութիւնը վճռեց զինուորական քննիչ յանձնաժողովի դատին ենթարկել նրան։ Պատգամաւորների ժողովը Տիրարի ճառը ընդունեց ծափահարութիւններով և ապա 343 ձայների մեծամասնութեամբ 93-ի դէմ քուէարկեց կառավարութեան առաջարկած հերթական գործերին անցնելը։ Զը նայելով այդ բոլորին, յոգոտ Բուլանժէի սկսած ագիտացիան մեծանում է. նրա բարեկամները մեծ պրոպագանդա են անում Բուլանժէին Հանրապետութեան նախագահ ընտրելու համար։ Այդ նպատակով, ի միջի այլոց, կը հրատարակվի մի բրոշիւր, կէս միլիոն օրինակների քանակութեամբ։

Կ. ՊՕԼԻՍ, 9 մարտի։ Ռուսաց դեսպանը առայժմ ոչինչ նոր առաջարկութիւններ չարաւ բոլգարական հարցի վերաբերութեամբ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Մարտի 8-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ ստրլ.	121	բ.	20 կ.
Համբուրգի վրա 100 մարկ — . .	59	»	75 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	47	»	90 »
Ոսկի — արժէ — . .	9	»	70 »
Մաքսային կուպօններ — . .	195	»	— »
Արծաթ — — — . . .	1	»	42 »
Բօրսային դիսկօնտներ — .	$6^1/_4$ և $7^1/_4$%		»
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99	»	75 »
— — — — 2-րդ —	97	»	65 »
— — — — 3-րդ —	97	»	37 »
— — — — 4-րդ —	98	»	— »
— — — — 5-րդ —	97	»	50 »
— — — — 6-րդ —	—	»	— »
Նոր 4% փոխառութիւն	82	»	37 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	98	»	75 »
— — 2-րդ —	98	»	— »
— — 3-րդ —	98	»	12 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	265	»	50 »
— երկրորդ —	244	»	— »
$5^1/_2$% բէնտա	103	»	— »
Ոսկեայ բէնտա.	199	»	75 »
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	170	»	50 »
Նոր երկաթուղային բէնտա . . .	97	»	62 »
5% զրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	168	»	— »
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	97	»	75 »
$5^1/_2$% զրաւական թղթեր Խերսոնի կալուած, բանկի.	98	»	75 »
6% զրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101	»	— »
— — Պոլտավայի— —	101	»	— »
— —Պետ.Ցուլսկ.— —	101	»	— »
— — Կիևվի — —	101	»	50 »
— — Մօսկվայի — —	102	»	— »
— — Բեսարաբ. Տավր.—	101	»	— »
— — Նիժ. Սամար. —	101	»	25 »
— — Վիլնայի —	101	»	25 »
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	—	»	— »
— —Բուխարայի-18 և 43 տ.	—	»	— »
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	694	»	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	276	»	— »
Ռիբինսկ-Վոլոգովի ընկ.	86	»	— »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	95	»	50 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	94	»	50 »
Օդէսայի — — .	93	»	25 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	—	»	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է, վերջը թոյլ։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հանգուցեալ ԴԱՒԻԹ ՆԵՐՍԷՍԵԱՆԻ ամուսինը և նրա ընկերները խնդրում են հանգուցեալի յիշատակը յարգողներին ներկայ լինել նրա հոգեհանգիստին, որը պէտք է կատարվի Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցում, մարտի 13-ին, կիրակի օր, պատարագից յետոյ։ 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՐԱՖՖԻԻ

„ՍԱՄՈՒԷԼ“

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊԻ

Առաջին, երկրորդ և երրորդ գիրքը, մի մեծ հատորի մէջ ամփոփված։

ԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է ուղարկեն նաև 50 կոպէկ ճանապարհի ծախսը։ Վաճառվում է հեղինակի մօտ, այլ և „Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում“։ Հեղինակի հասցէն. Въ ТИФЛИСѢ. Акопу Меликъ-Акопіану (Раффи). Въ Редакцію „АРЦАГАНКЪ“. 4—10

„ԱՂԲԻՒՐԻ“ ՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ տ. Միրզօեվի

Թիֆլիսում բացված է „Աղբիւրի“ վաճառանոց, յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար։ „Աղբիւրի“ վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մենագրամներ (զարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փօստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր ԹՂԹԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՐԳՈՒՆԻՆ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՒՈՐ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ։

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակվող մանկական թերթերի բաժանորդագրութիւն։

Վաճառանոցը կամենալով դիւրացնել գաւառաբնակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները։ Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել իրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշէներ։ Վարձու է տալիս „Աղբիւրի“ ծաղկատառերից և նկարներից։—Վաճառանոցը ընդունում է կօմիսիայով ծախելու զանազան հրատարակութիւններ։

Վաճառանոցում զետեղված է և „Աղբիւրի“ խմբագրութեան գրասենեակը, ուր միայն կարելի է բաժանորդ գրվել „Աղբիւրին“։

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ“. 10—10 (Հ. Ե)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ КОРОБКА 50 и 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկերի, Սէնչիկօվսկու և Ագմուրովի դեղատներում. ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ Բէկկերի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ՝ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ (Հ.)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ։

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիչերի մէջ նոր ածված ՑԵՑԻՑ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ, Նաւթալին, քսմֆօրա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը։

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ պրօֆէսօր ԿԻՏՏԱՐԱՑԻ, կարբոլացրած փօշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը իստակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլօրային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարգանեցի կրկնաթթուտ։ 88—100 (Հ.)

ԾԵՐԵՆՑԻ (ԴՕԿՏՕՐ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ)

Պատմական վէպերը՝

1. Թորոս Լևոնի . . . . . գինն է 1 բուբլի
2. Երկունք ինեերորդ դարու . . . . . „ 1 „
3. Թէոդորոս Ռշտունի . . . . . „ 1 „

Վաճառվում են դրանց հրատարակող Զաքարիա Գրիգորեանցի „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ“։ Հանցէն. Тифлисъ „Кавказская Книжная Торговля“. 5—6

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՑԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԴՊՐՈՑՈՒՄ վաճառվում են ամեն տեսակ թէ մրգատու և թէ զարդի ԲՈՅՍԵՐԸ։ Պահանջման ժամանակ պրէյսկուրանտները անվարձ են ուղարկվում։ 9—10

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, մարտի 17-ին, ԳԱԼԼԻԱ (LA GAULE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլօղլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Աբծրունի դալլերէում, № 103. 3—4

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ։

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

Գործարան Գ. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԷՐԱ կոչված թաղում։ 26—50

Дозволено цензурою, Тифлисъ 9 Марта 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.